



ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

**ք. Երևան
04.03.2021թ.**

ԲԴԽ-7-Ո-Կ-02

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ ԿԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՀՐԱՎԻՐՎԱԾ 04.03.2021 ԹՎԱԿԱՆԻ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ ՀԵՏԱՁԳԵԼՈՒ ԵՎ
ԼՐԱՑՈՒՑԻՉ ԱՊԱՑՈՒՅՑ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝
ՀԵՏԵՎՅԱԼ ԿԱԶՄՈՎ՝**

*նախագահությամբ՝
Բարձրագույն դատական խորհրդի նիստը
նախագահող՝*

Ա. Մխիթարյանի

*մասնակցությամբ՝
անդամներ*

- Գ. Բեքմեզյանի*
- Դ. Խաչատրյանի*
- Մ. Մակյանի*
- Լ. Մելիքջանյանի*
- Ս. Միքայելյանի*
- Ս. Չիչոյանի*
- Գ. Զհանգիրյանի*
- Վ. Քոչարյանի*

Արդարադատության նախարար

Ռ. Բադասյանի

Արդարադատության նախարարի
ներկայացուցիչ

Դ. Գասպարյանի

քարտուղարությամբ՝

Մ. Թելոյանի

դռնբաց նիստում, քննության առնելով Բարձրագույն դատական խորհրդի անդամ Գ. Բեքմեզյանի միջնորդությունը՝ լրացուցիչ ապացույց պահանջելու մասին, Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ այն ենթակա է բավարարման, քանի որ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով անհրաժեշտ է որպես լրացուցիչ ապացույց ուսումնասիրել դատավոր Կ. Պետրոսյանի կողմից Քաղաքացիական գործն ըստ առարկայական ընդդատության Սնանկության դատարանին հանձնելու միջնորդությունը մերժելու մասին 18.08.2020 թվականին կայացված որոշման համար հիմք հանդիսացած միջնորդությունը, ինչի կապակցությամբ անհրաժեշտ համարեց Դատական դեպարտամենտից պահանջել թիվ ԵԴ/24011/02/20 քաղաքացիական գործն ամբողջությամբ:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 151-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հարցի լուծման համար նշանակություն ունեցող փաստերի շրջանակը որոշելուց հետո Բարձրագույն դատական խորհուրդն իրավունք ունի՝

1) դատավորի, կարգապահական վարույթ հարուցած մարմնի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ դատավորից, կարգապահական վարույթը հարուցած մարմնից, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից (դրանց պաշտոնատար անձանցից), ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջելու ներկայացնել հարցի քննության համար նշանակություն ունեցող ապացույցներ, որոնք տվյալ անձանց ազդեցության ոլորտում են՝ սահմանելով ժամկետ դրանք Բարձրագույն դատական խորհուրդ ներկայացնելու համար, իսկ որոշումը կամովին չկատարելու դեպքում այն ներկայացնել կատարման «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» օրենքով սահմանված կարգով:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 93-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի նիստը հետաձգվում է նաև՝ հարցի քննությունը տվյալ նիստում անհնարին դարձնող այլ բացառիկ հանգամանքների առկայության դեպքում:

Հաշվի առնելով, որ անհնարին է առանց նշված լրացուցիչ ապացույցի ուսումնասիրման Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Կարինե Պետրոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի լուծումը՝ Բարձրագույն դատական խորհուրդն անհրաժեշտ է համարում հետաձգել սույն

գործով նիստը՝ մինչև Դատական դեպարտամենտի կողմից թիվ ԵԴ/24011/02/20 քաղաքացիական գործի տրամադրումը: Թիվ ԵԴ/24011/02/20 քաղաքացիական գործի տրամադրման համար սահմանվում է 7-օրյա ժամկետ:

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 93-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 151-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով՝ Բարձրագույն դատական խորհուրդը,

ՈՐՈՇԵՑ

1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Կարինե Պետրոսյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ 04.03.2021 թվականի նիստը հետաձգել:
2. Դատական դեպարտամենտից պահանջել թիվ ԵԴ/24011/02/20 քաղաքացիական գործը՝ ամբողջությամբ:
3. Դատական դեպարտամենտի կողմից թիվ ԵԴ/24011/02/20 քաղաքացիական գործը տրամադրելու համար սահմանել 7-օրյա ժամկետ:
4. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԸ

ՆԱԽԱԳԱՀՈՂ

ԱՆԴԱՄՆԵՐ՝

Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Գ. ԲԵՔՄԵՂՅԱՆ

Դ. ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

Մ. ՄԱԿՅԱՆ

Լ. ՄԵԼԻՔՉԱՆՅԱՆ

Ս. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

Ս. ՉԻՉՈՅԱՆԻ

Գ. ԶՀԱՆԳԻՐՅԱՆ

Վ. ՔՈՉԱՐՅԱՆ

